«Նոր ժամանակի կրթություն» Հ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝Անի Մանուկյան

Ուսումնական հաստատություն՝Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան հ. 10 հիմնական դպրոց

Երևան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..…..3

Գլուխ 1. 1. Ի՞նչ է արժեքը……4

1.2. Ինչու՞ է անհրաժեշտ արժեքային համակարգի ձևավորումը……...……7

Գլուխ 2. Ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգ առարկայի դասավանդման ընթացքում…….……..10

Եզրակացություն……....14

Օգտագործված գրականության ցանկ……15

Ներածություն

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման ընթացքում շատ կարևոր է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը: Այն սովորողներին թույլ է տալիս որպես անհատ, որպես քաղաքացի լինել ավելի լավը և ձգտել ավելիին: Հատկապես անցումային տարիքի սովորողների շրջանում տարածված է վատ վարքով կամ վատ արարքներով ինքնադրսևորվել: Ուստի՝ ուսուցչի դերը արժեքային համակարգի ձևավորման գործընթացում ավելի է մեծանում, քանի որ երեխան ընտանիքից բացի արժեքներ պետք է սովորի հենց դպրոցում:

Կարևոր են և՛ մարդկային, և՛ ազգային արժեքները: Այդպիսի արժեքների ձևավորումը ամենակարևոր դրսևորումն է յուրաքանչյուրիս համար: Ցանկացած առարկա դասավանդելիս անհրաժեշտ է երեխաներին նաև սովորեցնել արժեքներ, քանի որ առանց արժեքների մարդը հասարակության անդամ չի կարող լինել: Սովորողները պետք է իմանան իրենց արժեքը նույնպես, որպեսզի հասարակության մեջ կարողանան ներկայացնել իրենց կարևոր հատկանիշներն ու արժեքային համակարգը:

Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում արդիական թեմա է: Հատկապես ազգային արժեքներով երեխաներին դաստիարակելն ու կրթելը բոլորիս պարտքն է դրձել: Մենք պետք է հայրենասեր, ինքնությունը իմացող ու գնահատող սերունդներ ունենանք, որոնք կլինեն արժանի քաղաքացիներ մեր երկրի համար: Եվ ազգային արժեքների կրողը կհանդիսանան:

Ես իմ արջև խնդիր եմ դրել հասկանալ.

- Ինչու՞ է անհրաժեշտ արժեքային համակարգի ձևավորումը:
- Ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգ առարկայի դասավանդման ընթացքում:

Այս երկու՝ ինչու՞ և ինչպե՞ս հարցերի պատասխանները գտնելով ես կհասնեմ իմ նպատակին՝ արժեքներ կսովորեցնեմ յուրաքանչյուր դասի ընթացքում:

Գլուխ 1. 1. Ի՞նչ է արժեքը:

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր բաղադրիչներից են ՝ հավատն ու սերը:

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը՝ ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:

Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ: Օրինակ՝ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը: Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում: Ըստ Հեգելի. <<սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի <<Ես>>-ի մեջ և այնուամենայնիվ , այդ կորսվածության ու մոռացվածության մեջ առաջին անգամ գտնես և տիրապետես քեզ>>: Սերն ապրում է, որն ըստ Հեգելի չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից: Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է:

Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման: Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է

Սոկրատեսից, ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի (որի կրողը նա համարում է ճշմարիտը), գործնականի (բարին), գեղարվեստականի (գեղեցիկը)։

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են։ Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին։ Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով։

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ։ Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։ Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։

Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում։ Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի։ Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր։ Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ։ Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում։

Հիմա անդրադառնանք բարոյականությանը։ Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է։ Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց։ Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման։ Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը։ Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը։ Հենց դրանով է վտանգավոր, օրինակ՝ կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը։

Արժեքները ներառում են կյանքը, ազատությունը, երջանկությունը, խաղաղությունը, մարդկության կյանքը, արդարության մասին գաղափարները, իրավունքներն ու պարտականությունները, ընտանեկան կապերը, ինքնապահպանման և ինքնահաստատման արժեքները, և այլն:

Կան արժեքներ, որոնք երբեք չեն կորցնի իրենց նշանակությունը: Դրանցից են.

- Առողջությունը
- Սերը, ընտանիքը, երեխաները, տունը
- Մտերիմները, ընկերները, շփումը
- Սեր
- Ընկերություն
- Շնորհակալություն
- Հարգանք
- Բարությունը
- Առատաձեռնություն
- Խոնարհություն
- Ազնվությունը
- Արդարադատություն
- Քաջություն
- Ինքնատիրապետում

1.2. Ինչու՞ է անհրաժեշտ արժեքային համակարգի ձևավորումը

<<Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է>>:[1]

ՀՀ Սահմանադրություն

Այս հոդվածում նշվում է, որ մարդը բարձրագույն արժեք է և իր իրավունքներն ու ազատությունները որպես արժեք անօտարելի են: Սա շատ կարևոր հոդված է, որով պետությունն էլ հստակ կարևորում է մարդուն՝ որպես արժեքներից բարձրագույնը, ում կյանքը, արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները արժեքային համակարգի դրսևորումներից է:

Բացի բարոյական և ազգային արժեքներից, առանձնահատուկ կարևորություն ունեի իրավունքը որպես արժեք:

Ինչու՞ պետք է ընկալել իրավունքը որպես արժեք: Իրավունքը որպես արժեք արդիական է բոլոր ժամանակներում: Շատ հաճախ երեխաները չիմանալով իրենց իրավունքների մասին՝ չգիտեն ինչպես իրենց պաշտպանել: Առաջին հերթին մենք՝ ուսուցիչներս, պետք է արժևորենք իրավունքի դերը , և , իրավունքներից զատ կարևորել նաև պարտականությունները[2]: Եվ այդպես կստացվի ուսուցիչ-աշակերտ համագործակցություն: Այս համագործակցության արդյունքում երեխան կիմանա իր իրավունքներն ու պարտականությունները: Եվ կունենանք իրավական, ժողովրդավարական կարողունակություններով օժտված հասարակություն:

Ինչու՞ պետք է արժեքներ ձևավորել ցանկացած առարկա դասավանդելիս: Կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների դերը աշակերտների մոտ և այդ բառին ինչ-որ յուրահատուկ իմաստ ենք հաղորդում: Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տառապանք, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների,

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 3.1:
[2] Երեխաերի իրավունքների մաին ՀՀ օրեք:

հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման: Արժեքները ներառում են կյանքը, ազատությունը, երջանկությունը, խաղաղությունը, մարդկության կյանքը, արդարության մասին գաղափարները, իրավունքներն ու պարտականությունները, ընտանեկան կապերը, ինքնապահպանման և ինքնահաստատման արժեքները, և այլն:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտրել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Իմանա, որ հաղթանակի ճանապարհին լի են դժվարությունները, և նա պետք է ոչ թե հիասթափվի, ընկճվի, այլ մտածի դժվարությունները հաղթահարելու մասին, ելքեր ու հնարներ գտնի դրա համար: Մահաթմա Գանդին ասել է. <<Ձեռքերը ծալելով ոչնչի չեք հասնի>> [3]: Այսինքն՝ մենք պետք է երեխաներն սովորեցնենք քրտնաջան աշխատել ու պայքարել նպատակներին հասնելու համար:

Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինի իրական արժեքները, այլ ոչ թե

[3] Մահաթմա Գանդի, <<Տասն անգին խորհուրդներ>>:

թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ ունեցող սերունդ, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը: Երեխաները արժեքները իմանալով ևս մեկ արժեք կառանձնացնեն՝ կրթությունը: Կրթություն, որով լիարժեք կլինի իրենց արժեքային համակարգը: Կունենանք արժևորված, բանիմաց ու կիրթ սերունդ, ով ինչ մասագիտություն էլ, որ ունենա, կլինի գրեթե կատարյալ իր տեսակի մեջ:

Եվ այս մոտեցումը ստիպում է ուսուցչին լինել ավելի շատ արժեքների կրող: Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում շատ ենք ուշադրություն դարձնում արժեքներին: Բայց սոսկ խոսելը արժեքների մասին բավական չէ, անհրաժեշտ է մեթոդներ կիրառել արժեքներ զարգացնելու համար:

Գլուխ 2. Ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգ առարկայի դասավանդման ընթացքում:

Արժեքները սերմանվում են դաստիարակության հետ միասին: Բայց դաստիարակությունը չի ավարտվում ընտանիքով: Երեխաները շատ բան են ստանում իրենց ընկերների և շրջապատի մարդկանց հետ շփվելիս: Առավել մեծ ազդեցություն կարող է թողնել մի անձնավորություն, որին բոլորից շատ են հարգում, և նա անպայման չէ, որ լինի տան անդամ, նա կարող է լինել ուսուցիչը, որին երեխաները կարող են սիրել, հավատալ, վստահել, օրինակ վերցնել նրանից: Եվ այստեղ արդեն հարց է առաջանում ինչպե՞ս դառնալ արժեքների կրող և ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգ առարկայի դասավանդման ընթացքում:

Բարոյական արժեքները գաղափարներ և համոզմունքներ են, որոնք մարդիկ ունենում են այն մասին, թե որնէ ճիշտ, և որն է՝ սխալ: Ասում են, որ մարդն ունի բարոյական արժեքներ, երբ ունի սովորույթներ և ավանդույթներ, որոնք համարվում են դրական և լավ ուրիշների բարեկեցության համար[4]:

Բարոյական արժեքների օրինակներն են անկեղծությունը, առատաձեռնությունը, հարգանքը, բարությունը և այլն: Սրանք վարքգիծ են, որոնք լավ են համարվում: Հետևաբար, այս տեսակի արժեքներ ունեցող անձը բարոյական է:

Ասում են մի մարդ հարցրել է մաթեմատիկոս Ալ-Խորեզմիին մարդու արժեքների մասին , և նա պատասխանել է. <<Եթե մարդ ունի բարոյականություն նա թիվ 1-ն է, իսկ եթե մարդ ունի գեղեցկություն, ապա դրա կողքին ավելացրու 0=10, թեթ նա փող ունի ավելացրու ևս 0=100, եթե ունի այլ որոկներ ավելացրու ևս մեկ 0=1000: Եթե թիվ մեկը հեռանում է, այսինքն՝ բարոյականությունը, մարդու արժեքը հեռանում է, մնում են արժեք չունեցող զրոները>>[5]: Այս խոսքերը ապացուցում են, որ մարդը արժեք չունի առանց բարոյականության, առանց բարոյական արժեքների: Ուստի մեր խնդիրն է առաջին հերթին բարոյական արժեքներ սովորեցնել մեր աշակերտներին:

---

[4]Քաղաքացիական կրթություն, Արմենուհի Հովհաննիսյան, Միլենա Դավթյան, Երևան, 1999:

[5] Ալ-Խորեզմի, <<Թևավոր խոսքեր>>:

Արժեքները մի շարք նորմեր են, որոնք կարգավորում են համայնքի և այն կազմող անհատների գործունեությունը: Դրանք թույլ են տալիս տարբերակել լավը՝ վատից: Ինչ վերաբերում է կոնկրետ բարոյական արժեքներին, դրանք բացարձակ արժեքներ են, որոնք կապված են բարու և չարի հետ: Դրանք կախված են յուրաքանչյուր հասարակության մշակութային շրջանակից, ուստի ժամանակի հետ փոփոխվում են:

Դրանց ձևավորումը վաղ տարիքից ուղղակիորեն ազդում է անհատի վրա, ուստի արժեքները սովորաբար փոխանցվում են տոհմածառի և այն միջավայրի փորձի միջոցով, որում յուրաքանչյուր մարդ զարգանում է:

Յուրաքանչյուր երեխա ինքնուրույն որոշում է ապրել բարոյական արժեքների շրջանակի համաձայն, որպեսզի այդ որոշումն ընդունվի ազատ և անկախ: Այս տրամադրվածությունը նրան կհանգեցնի շատ ավելի մարդկային կատարողականի, և նա ավելի լավ մարդ կլինի[6]:

Բարոյական արժեքները և, ընդհանուր առմամբ, արժեքների ամբողջ շրջանակը, ունեն մի շարք ընդհանուր հատկություններ, որոնք հեշտությամբ կարելի է ճանաչել՝ արժեքները տարբերելու վարքային այլ ձևերից:

Այս բնութագրերի համապատասխանությունը սովորաբար շատ ակնհայտ է, բայց պարտադիր չէ, որ բոլորը բավարարվեն՝ ստանդարտը որպես արժեք դիտարկելու համար: Այս հիմնական բնութագրերը հետևյալն են.

Դրանք կապված են մարդու հիմնարար հույզերի հետ.

Բարոյական արժեքները բնութագրվում են, քանի որ դրանք անմիջականորեն կապված են մարդու էական հույզերի հետ: Այս կատեգորիայի մեջ կան սեր, հավատարմություն, մեղավորություն և զայրույթ:

Վերացական են.

Դա այդպես է, քանի որ դրանք մտավոր կառուցվածքներ են, որոնք սկսվում են իրերի մեկնաբանությունից՝ հաշվի առնելով անհատի մշակութային շրջանակը և նրանց սեփական կյանքի փորձը:

Դրանք կարևոր են.

[6] Հանրակրթության մասին ՀՀ օենք:

Վարքի այս օրինաչափությունները թույլ են տալիս մեզ «լավը» «վատից» տարբերել ՝ դրանով իսկ իմաստ տալով բուն կյանքին և հետապնդելով մարդկանց գերազանցումը:

Դրանք անհատական են և կոլեկտիվ.

Չնայած դա հակասական է թվում, կան որոշակի արժեքներ, որոնց դրսևորումը կլինի հավաքական (հասարակության շրջանակներում), իսկ մյուսները ՝ավելի անհատական տեսլական՝ ըստ յուրաքանչյուր անհատի տեսակետի մոդելավորվում են ամբողջ կյանքի ընթացքում փորձի կուտակմամբ:

Այս իմաստով բարոյական արժեքները փոխանցվում են սերնդեսերունդ, ինչը կարևորում է կրթության կարևորությունը ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ դպրոցական միջավայրում, քանի որ երկու միջավայրերն էլ հանդիսանում են հիմնական ուսուցման օղակները:

Նույնը տեղի է ունենում այն ժամանակ, երբ անձը միանում է կազմակերպության կամ խմբի: Այս պահին նրա անձնական արժեքները պետք է լինեն բնածին և հարմարեցված խմբի արժեքների շրջանակին, որպեսզի նա կարողանա հանգիստ լինել և զարգացնել պատկանելության զգացում:

Հաշվի առնելով այս ամենը, կարևոր է նշել, որ արժեքների շրջանակը կարող է փոփոխվել և վերադասավորվել, քանի որ մեկը ավելի շատ կյանքի փորձ ունի:

Դա պայմանավորված է նրանով, որ ճանապարհին ինչպես ուրիշների, այնպես էլ շրջակա միջավայրի ազդեցությունը փոխում է այս սխեման և ի վիճակի է այն հարմարեցնել ինչպես պատմական պահին, այնպես էլ յուրաքանչյուր անհատի մտածելակերպին:

Առարկայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է կիրառել մեթոդներ, հնարներ, որոնք կօգնեն դասապրոցեսի ընթացքում սովորեցնել շատ արժեքներ: Ինչպիսիք են՝ համագործակցությունը, որը կարելի է սովորեցնել խմբային աշխատանքի միջոցով: Համակեցությունը՝ մարդկային, բարոյական արժեքների վերհանումը ոչ միայն զրույցի, այնպես էլ դերային խաղի և բազում մեթոդների միջոցով:

Ինչպե՞ս առարկայի դասավանդման ընթացքում սովորեցնել արժեքներ: Այս հարցադրումը ինչքան պարզ է, և միևնույն ժամանակ առաջացնում է այլ հարցեր: Արդյո՞ք հնարավոր է սա անել: Այո՛, հնարավոր է ցանկացած առարկա դասավանդելիս անդրադառնալ արժեքներին: Սա կարելի է անել թե նկատելի, և թե աննկատ կերպով, երբ աշակերտը չզգա նույնիսկ, թե դասի ընթացքում ինչպես հասավ արժեքային համակարգին, և երբ դասի վերջում ուսուցիչը վերլուծի դասը, վերհանի այն կարևոր արժեքները, ինչ մասին խոսվեց, կամ գործողությամբ ընկալվեց:

Շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորումը հատկապես այն դեպքում, երբ դասարանում կան առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներ, և նրանց հանդեպ երեխաները չունեն ճիշտ վերաբերմունք: Այստեղ ուսուցչի դերը ավելի է մեծանում : Ուսուցիչը պետք է հնարներ ու մեթոդներ կիրառի, որ նման երեխաների հանդեպ վերաբերվեն դասընկերները մարդասիրաբար, օգնեն , հոգ տանեն, և այդ երեխան չզգա որևէ տարբերություն: Չէ՞ որ այս երեխաները շատ հաճախ ավելի շատ արժեքներ են կրում իրենց մեջ, քան՝ մենք:

Եզրակացություն

Արժեքների ուսումնասիրության արդյունքում պարզեցի, թե ինչքան շատ արժեքներ ունենք մենք, և ինչքան տարբեր է մեր ընկալումները արժեքի մասին: Կարևորեցի մարդկային, բարոյական, ազգային և հոգևոր արժեքների դերը առարկայի դասավանդման ընթացքում: Ինչպես նաև մարդը որպես արժեք և իրավունքը որպես արժեք նեկայցնելու կարևորությունը:

Իմ արջև նպատակ և հարցադրումներ ունեի՝ ինչու՞ է անհրաժեշտ արժեքների ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում և ինչպե՞ս ձևավորել արժեքներ առարկայի դասավանդման ընթացքում: Այս հարցադրումները, որ իմ արջև դրված էին, ինձ օգնեցին հասկանալ, թե ինչ մեթոդներով և կարողունակություններով կարող եմ հասարակագիտություն կամ պատմություն առարկայի դասավանդման ընթացքում աշակերտներին սովորեցնել արժեքներ՝ անկախ դասի բովանդակությունից: Եվ այս ամենի արդյունքում եկա այն եզրահանգման, որ առաջին հերթին ես որպես ուսուցիչ պետք է արժեքների կրող լինեմ և օրինակ ծառայեմ աշակերտներիս համար, ձևավորեմ կարողունակություններ, ինչպիսիք են՝ լեզվական մտածողության կարողունակությունը, մեդիագրագիության կարողունակությունը, ժողովրդավարական ու քաղաքացիական կարողունակությունը՝ իրավունքը որպես արժեք ներկայացնելիս, մշակութային կարողունակությունները՝ ազգային արժեքները ներկայացնելիս և այլ կարողունակություններ:

Այսպիսով՝ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում ուսուցչի կարևոր առաքելություններից մեկն է: Մենք ենք արժեքների կրողն ու փոխանցողը: Մենք ենք գալիք սերնդի արժեքային համակարգի ձևավորման համար պատասխանատուն: Ուստի՝ մենք պետք է լինենք համառ, քաջ այս նվիրական գործում և այս գործում ուսուցչի՝ <<ես եմ արժեքի կրողն ու փոխանցողը>>, պետք է աշակերսի <<ես>>_ի հետ դառնա մենք՝ <<ՄԵՆՔ ԵՆՔ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿՐՈՂՆ ՈՒ ՓՈԽԱՆՑՈՂԸ>>:

Օգտագործված գրականության ցանկ

ՀՀ Սահմանադրություն,

Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրեք,

Հանրակրթության մասին ՀՀ օենք,

Քաղաքացիական կրթություն, Արմենուհի Հովհաննիսյան, Միլենա Դավթյան, Երևան, 1999թ.,

Ալ-Խորեզմի, <<Թևավոր խոսքեր>>,

Մահաթմա Գանդի, <<Տասն անգին խորհուրդներ>>: